ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ.

Սինոդը՝ քննութեան առնելով Ներսիսեան հոգևոր դպրոցի 1914/15 ուս. տարուայ նախահաշիւը, որի համաձայն մուտք է սպասւում 136870 ռուբ. իսկ ելք՝ նոյնքան, որոշեց. Ընդունելի համարելով Ներսիսեան դպրոցի Հոգաբարձութեան բացատրութիւնը, հաստատել 1914/15 ուս. տարուայ նախահաշիւը և նորից յիշեցնել դպրոցի Հոգաբարձութեան, որ պարտքի հատուցման և անձեռնմխելի գումարի լրացման համար հոգ տարուի և որոշ գումար յատկացուի իւրաքանչիւր տարի։ 1 հոկտեմբ., թ. 498։

Սինոդը՝ քննութեան առնելով Մայր Աթոռի միաբան հանգուցեալ Սուքիաս արքեպիսկոպոսի կտակի վերաբերեալ գործը, որոշեց. Նախ, առաջնորդուելով Օր. XI հատ. 1 մ. 1219 յօդուածով և ի նկատի առնելով, որ հանգուցեալ Սուքիաս արքեպիսկոպոսի մահից յետոյ մնացած արժէքների և պարտամուրհակների գումարը հասնում է 76700 ռ., այդ գումարից 75000 ռ., կտակի համաձայն, շահեցնել բարդ տոկոսներով, մինչև որ գումարը կրկնապատկուի և ապա դրամագլուխը պահելով անձեռնմխելի, տոկոսները գործադրել Մ. Աթոռի Գ. Ճեմարանում որդեգիրներ պահելու հանգուցեալի անուան, և մատենագրութեանց տպագրութեան։ Երկրորդ՝ ընդհանուր 76700 ռ. դրամագլխից դուրս գալով վերոյիշեալ 75000 ռ., մնացորդ 1700 ռ. տնօրինել հետևեալ կարգով. հանգուցեալի ցանկութեամբ տալ աջահամբոյր միաբաններին, նաև բաշխել Ճեմարանի սաներին, սպասաւորներին և ծառաներին կտակում որոշած չափերով. նմանապէս տալ հանգուցեալի ծառայ Բարսեղ Ղազարեանին միանուագ չորս հարիւր ռուբլի, ապա 1700 ռ. մնացորդը հաշուել իբրև ծախք հանգուցեալի բժշկութեան և թաղման։ Երրորդ՝ հանգուցեալի իրեղէնները յանձնել դանձատուն, մթերանոց, հիւրատուն և այլն, ըստ պատկանելոյն։ Չորրորդ՝ Սինոդի նախկին պրոկուրոր Ֆրէնկէլից 100 ռուբլին ստանալու համար յանձնարարել Սինոդի հաւատարմատարին նորա դէմ դատ սկսել։ Հինգերորդ՝ Համ-

բարձում Սողոմոնեանից պարտամուրհակով 8000 ռ. և սոխրաննի բոսպիսկաներով 25000 ռուբ. արժէթղթերը ժամանակին ստանալու համար պատշաճ միջոցներ ձեռք առնել և ստացուող գումարները միացնել մայր գումարին. իսկ նօտարի միջոցով յայտնել Սողոմոնեանին, որ Սուքիաս արքեպիսկոպոսի մահից յետոյ ըստ օրինի ժառանգ հանդիսանում է Մայր Աթոռը, որին և նա պարտաւոր է որոշուած ժամանակներում վերադարձնել 8000 ռ. կանխիկ դրամը և 25000 ռ. արժէթղթերը։ Վեցերորդ՝ տեղական փոստատնից պահանջել Երուսաղէմից վերադարձրած 200 ռ. և միացնել մայր գումարին։ Եւ, եօթներորդ, պատուիրել Սինոդիս Հաշուարարական Մասին առանձին հաշիւ պահել Սուքիաս արքեպիսկոպոսի դրամագլխի մասին և իւրաքանչիւր տարուայ վերջին ամփոփ հաշիւ տպագրել տալ «Արարատ» ամսագրում։ 1 հոկտեմբերի, թ. 499։

Սինոդը՝ Վեհափառ Կաթուղիկոսի մակագիր պատուէրի համաձայն, որոշեց. Պատուիրել Մ. Աթոռի գանձապահին փոխադրել Ատրպատականի Հայոց առաջնորդի անունով երեք հարիւր յիսուն ռուբլի իբրև նպաստ Մ. Աթոռում գանձուած դպրոցական ֆոնդի $^0/_0$-ից Ատրպատականի Խոյ գաւառի Սէյդավար գիւղի դպրոցին։ 8 հոկտեմբ., թ. 507։

Սինոդը՝ լսելով Ղարաբաղի թեմի ժամ. կառավարչի այս տարուայ յուլիսի 31-ի, № 882 յայտարարութիւնը, որոշեց. Մերժել Շուշու գաւառի Մուշկապատ գիւղի սարկաւագ Աստուածատուր Ադամեանին նոյն գաւառի Խանքենդ աւանի վրայ քահանայ ձեռնադրելու խնդիրը, ինկատի ունենալով, որ նա ձեռնադրուած է Մուշկապատի եկեղեցու վրայ։ 3 հոկտեմբ., թ. 503։

Սինոդը՝ համաձայն Վեհափառ Կաթուղիկոսի անցած հոկտեմբերի 4-ի, № 1503 կոնդակի, որոշեց. Ընդունել Լորեցի Յովհաննէս քհնյ Տէր-Գրիգորեանին Տաթևի վանքի կուսակրօն միաբանների շարքը և այս մասին ամենախոնարհ յայտարարութեամբ զեկուցանել Նորին Սրբութեան ի տեղեկութիւն։ 13 հոկտեմբ., թ. 514։

Սինոդը՝ Վեհափառ Կաթուղիկոսի այս տարուայ հոկտեմբերի 18-ի, № 1649 կոնդակի համաձայն, որոշեց. Ընդունել Ամենա գիւղի այրի Ներսէս քահանայ Տէր Յակոբեանին Մողնու ս. Գէորգ վանքի կուսակրօն միաբան և այդ մասին զեկուցանել Նորին Սրբութեան ի բարեհաճ տնօրինութիւն։ 24 հոկտեմբերի, թ. 532։

Սինոդը՝ Վեհափառ Կաթուղիկոսի այս տարուայ հոկտեմբ. 15-ի, № 1644 կոնդակի համաձայն, որոշեց. Ուղարկել Կովկասի Ուսումնական Շրջանի Հոգաբարձուին Նորին Սրբութեան կողմից հաստատուած հայոց եկեղեցական այն տօների ցուցակի պատճէնը, որոնց առթիւ պետական դպրոցների հայ աշակերտ-աշակերտուհիները ազատուելու են պարապմունքներից, և այս մասին տեղեկութիւն տալ Սինոդի պ. Դատախազին։ (Տօների ցուցակը տես Դիւանի քաղուածներում, երես 966) 27 հոկտեմբ., թ. 543։

Սինոդը՝ Էջմիածնապատկան կալուածների կառավարչի զեկուցման համաձայն, որոշեց. Թոյլ տալ նոյն կառավարչին Զարեքայ վանքի անտառի № № 7, 8 և 9 մասերից, ներկայացրած ցուցակի համեմատ, կտրել վաճառքի համար 1928 հատ ծառ, 974 ռ. արժողութեան։ 27 հոկտեմբ., թ. 545։

Սինոդը՝ լսելով Զանգուի առուի շինութեան Յանձնաժողովի նախագահի զեկուցումը առուի պակասութիւնները լրացնելու մասին և քննութեան առնելով այդ առթիւ ինժենիրների կարծիքն ու ներկայացրած նախահաշիւը, որոշեց. Զանգուի առուի Յանձնաժողովի նախագահի անունով բանալ նորոգութիւնները և պակասութիւնները լրացնելու համար 23686 ռ. 6 կոպ. վարկ և պատուիրել Մ. Աթոռի գանձապահին հետզհետէ վճարել այդ գումարը։ Անկախ դրանից պատուիրել Յանձնաժողովին միջոցներ ձեռք առնել ստանալու առուին մասնակցող միւս գիւղացիներից նրանց բաժին ծախքը։ 27 հոկտեմբ., թ. 546։

Սինոդը՝ Ղարաբաղի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. Թոյլ տալ նոյն կոնսիստորիային ըն-

դունել հոգևոր կոչման մէջ Նոր-Բայազէտի Շահրիզ գիւղացի Գալուստ Տէր Յովհաննէսեանին, և առաջադրել Սեանի միաբան Տ. Սարգիս եպիսկ. Փիլոյեանին ձեռնադրել նրան քահանայ Ջիւանշիրի գաւ. Ներքին Զայլու գիւղի համար այն դէպքում, երբ Երևանի կոնսիստորիայի միջոցով կըստացուի ընծայացուցից ստորագրութիւն ցմահ նոյն գիւղի ծխականներին հովուելու պարտաւորութեան մասին։ 31 հոկտեմբ., թ. 553։

Սինոդը՝ ստանալով Կովկասի Տ. Փոխարքայից պատշաճաւոր թոյլտուութիւն, որոշեց. Պատուիրել Վրաստանի կոնսիստորիային մկրտել հրէուհի Մասիա Դուրֆինկէլին Հայաստանեայց Եկեղեցու ծիսով, պահպանելով Օր. XI հատ. 1 մ. 7 յօդ. յաւելուածի կանոնները։ 31 հոկտեմ., թ. 554։

Սինոդը՝ քննութեան առնելով Շամախու գաւ. Քեալխան գիւղի ծխատէր Յարութիւն քհնյ. Շիրակունու մեղադրական գործը կոչմանն անվայել ընթացքի համար, որոշեց. Ի նկատի ունենալով, որ քննութեամբ չի հաստատուում Շիրակունի քահանային վերագրած յանցանքը, այլ և նրա դէմ եղած բողոքներն արդիւնք են քահանայի և ժողովրդի մէջ եղած դժգոհութեան ու գժտութեան, բեկանել կոնսիստորիայի վճիռը և ճանաչել Շիրակունի քահանային անպարտ։ Իսկ եթէ քահանան, իրօք, զառամութեան պատճառով չէ կարող քահանայագործել, յարուցանել նոր խնդիր այդ մասին և ներկայացնել Սինոդիս տնօրինութեան։ Անկախ դորանից պատուիրել Շամախու կոնսիստորիային խստիւ հետևել, որ պաշտօնեաների ձեռքով հոգևոր վարչութիւնների անունով մասնաւոր մարդկանց համար ոչ մի խնդիր չդրուի։ 3 նոյեմբերի, թ. 557։

Սինոդը՝ Կովկասի Տ. Փոխարքայից պատշաճ թոյլտուութիւն ստանալով, որոշեց. Պատուիրել Ղարաբաղի կոնսիստորիային կարգադրել մկրտել հրէուհի Մարիա Պարատիզին Հայաստանեայց Եկեղեցու ծիսով, պահպանելով Օր. XI հատ. I մ. 7 յօդ. յաւելուածի կանոնները։ 3 նոյեմբ. թ. 559։